

Հայ մարդու ազգային ինքնութեան ձեւաւորման մէջ մի նոր ազդակ է Հայաստանի անկախ պետականութեան վերածնունդը, եւ այդ իրողութեան մէջ բացայայտ աճ է ապրում մինչ այժմ ճնշուած ու զսպուած պատմական յիշողութիւնը եւ դրսեւորում, արձագանք գտնում գրականութեան մէջ: Յատուկ հետաքրքրութիւն կայ հանդէպ Արեւմտեան Հայաստանից գաղթած տատերի ու պապերի կեանքի պատմութեան շուրջ: Հայաստանում ապրող հայը այլեւս գիտակից է Սփիւռքի գոյութեանը ու անցեալի հետ հաշուի ստեղծելու, իր ազգային ինքնութիւնն ու պատկանելիութիւնը արժեւորելու նրա տարած շարունակական պայքարին: Նորանկախ Հայաստանը կարող է համայն հայութեան հայրենիքը դառնալ, պաշտպանն ու ապաւենը՝ նոյնիսկ այն հայերի, որոնք հալածանքի վախից իրենց ազգութիւնը թաքուն են պահում, նոյնիսկ նրանց, որոնք իսլամ կրօնին են դաւանում: Ձեւաւորուող այս նոր իրականութիւնը կարող է իր կնիքը դնել աշխարհացրիւ հայի ինքնագիտակցութեան եւ ազգային ինքնութեան վրայ: Հարցումներ, որոնց պատասխանը դեռ չի երեւում:

Ռուբինա Փիրումեան
Փետրուար, 2008,
Մայիս, 2012,
Լոս Անջելէս